



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ ԸԻԴ N 2525/02/2015  
Նախագահող դատավոր՝ Հ. Խաչատրյան  
Դատավորներ՝ Հ. Գրիգորյան  
Կ. Սաղյան

Քաղաքացիական գործ ԸԻԴ N 2525/02//2015

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ

19 ապրիլի 2016թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր  
դատավորներ՝

Վ. Հովսեփյանի  
Ի. Կարապետյանի  
Ա. Աբրահամյանի

Քննելով ըստ հայցի Արմեն Շավարշի Հարությունյանի ընդդեմ Հովիկ Ղարիբի Բաղասյանի և Սամվել Շավարշի Հարությունյանի՝ բաժնային սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Ստեփանակերտ քաղաքի Վ. Սարոյան փողոցի թիվ 4 շենքի թիվ 21 բնակարանում բնակվելուն ուղղված խոչընդոտները վերացնելուն պարտավորեցնելու և գույքի տիրապետման ու օգտագործման կարգ սահմանելու պահանջներին մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի՝ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 2016 թվականի մարտի 14-ի որոշման դեմ հայցվոր Արմեն Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Արմեն Հարությունյանը 2015 թվականի դեկտեմբերի 24-ին դիմել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան/ ընդդեմ Հովիկ Բաղասյանի և Սամվել Հարությունյանի՝ բաժնային սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Ստեփանակերտ քաղաքի

Վ.Սարոյան փողոցի թիվ 4 շենքի թիվ 21 բնակարանում բնակվելուն ուղղված խոչընդոտները վերացնելուն պարտավորեցնելու և գույքի տիրապետման ու օգտագործման կարգ սահմանելու պահանջներով:

Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ պատասխանողներ Հովիկ Բաղասյանը և Մամվել Հարությունյանը փոխարինվել են պատասխանողներով՝ Հովիկ Բաղասյանով և նրա ընտանիքի անդամներ Մարինե Հարությունյանով, Լիդա Բաղասյանով և Լեո Բաղասյանով:

Արմեն Հարությունյանը 2016 թվականի փետրվարի 24-ին լրացուցիչ հայցային դիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Մամվել Հարությունյանի, Հովիկ Բաղասյանի, Մարինե Հարությունյանի, Լիդա, Լեո Բաղասյանների, Ստեփանակերտ նոտարական տարածքի նոտար Ն.Գրիգորյանի, ԼՂՀ կառավարության աշխատակազմի և Վալերի Հարությունյանի՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի 18.04.2007թ. վկայագիրն անվավեր ճանաչելու, որպես անվավերության հետևանքներ՝ կադաստրի միասնական 4-22 մատյանի 079736 համարի տակ 27.04.2007թ. կատարված իրավունքների գրանցումը, 01.08.2006թ. և 31.01.2007թ. լիազորագրերը, 18.05.2007թ. նվիրատվության պայմանագիրը, 16.06.2007թ. և 26.08.2015թ. կադաստրի միասնական 5-4 մատյանի 074300 համարի տակ կատարված Ս.Հարությունյանի իրավունքների գրանցումն անվավեր ճանաչելու, Վ.Հարությունյանին իրեն հասանելիք սեփականությունից հրաժարված ճանաչելու, իրեն՝ մոր թողած ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 4 շենքի երկսենյականոց բնակելի տան նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու և Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարոյան փողոցի թիվ 4 շենքի երկսենյականոց բնակելի տունը Հ.Բաղասյանի ու Ս.Հարությունյանի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու մասին:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը /դատավոր՝ Ռ.Ջհանգիրյան/ 2016 թվականի փետրվարի 25-ին որոշում է կայացրել հայցվոր Ա.Հարությունյանին չթույլատրել փոխելու լրացուցիչ հայցային դիմումով ներկայացրած հայցի հիմքը և առարկան:

Հայցվոր Ա.Հարությունյանը 2016 թվականի մարտի 2-ին նշված որոշման դեմ բերել է վերաքննիչ բողոք, որը ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2016 թվականի մարտի 14-ի որոշմամբ վերադարձվել է:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ հայցվոր Ա.Հարությունյանը բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել պատասխանողներ Հ.Բաղասյանը և Ս.Հարությունյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է և սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասը, 223-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասը, 223-րդ հոդվածի 2-րդ մասը, 234-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերը, որոնք պետք է կիրառեր:

Նշված պնդումը բողոքաբերը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն՝...3/

հարցը, որի վերաբերյալ որոշում է կայացվում, 4/ շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևություններին՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, 5/ եզրահանգումը քննարկվող հարցով:

Վերաքննիչ բողոքը ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով վերադարձնելու դեպքում օրենսդիրը Վերաքննիչ դատարանի առջև վավերապայման է դնում բողոքում թույլ տրված թեկուզև մեկ առերևույթ խախտման առկայության բացահայտումն ու արձանագրումը: Իսկ նման առերևույթ խախտումների առավել քանակի առկայության դեպքում օրենսդիրը Վերաքննիչ դատարանին պարտավորեցնում է բողոքը վերադարձնելու որոշում կայացնելիս նշել բողոքում առկա բոլոր առերևույթ խախտումները, ինչպես նաև այն շարժառիթները, որոնցով Վերաքննիչ դատարանը հանգել է վիճարկվող դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու վերաբերյալ հետևություններին:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանի վիճարկվող որոշումը չի պարունակում նշում այն հարցի, որի վերաբերյալ Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել, ինչպես նաև այն շարժառիթները, որոնցով Վերաքննիչ դատարանը հանգել է բողոքը նշված հիմքով վերադարձնելու հետևության: Վերաքննիչ դատարանը թույլ է տվել առերևույթ դատական սխալ՝ չպատճառաբանելով վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին իր հետևությունը:

Բողոքաբերի կարծիքով՝ քանի որ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածը լրացուցիչ հայցը վերադարձնելու վերաբերյալ կարգավորում չունի, իսկ հայցադիմումը վերադարձնելու /և ընդունումը մերժելու/ հիմքերը սպառիչ են /հոդվածներ 81-րդ և 82-րդ/, այլ հիմքերով կամ առանց հիմքի հայցադիմումը վերադարձնելը հավասարազոր է արդարադատության մերժման: Հայցադիմումը վերադարձնելու կամ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը դասվում է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շարքին:

Ըստ բողոքի՝ Առաջին ատյանի դատարանը թույլ չի տվել ներկայացված լրացուցիչ հայցով փոփոխել սկզբնական հայցի հիմքը և առարկան այն հիմնավորմամբ, որ օրենսդիրը հայցվորին իրավունք է վերապահել փոխել կամ հայցի միայն հիմքը, կամ էլ՝ առարկան, և ոչ թե երկուսը միաժամանակ: Մինչդեռ ընդհանուր նորմը՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը թույլատրում է գործով դատաքննության նախապատրաստման փուլում փոխելու հայցի հիմքը և առարկան՝ միաժամանակ:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերը հիմնավորել է նրանով, որ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ առկա է հայցի հիմքը կամ առարկան փոխելու, հայցադիմումը առանց համապատասխան որոշում կայացնելու վերադարձնելու կամ վարույթ ընդունելու հարցերի առթիվ օրենքի միատեսակ կիրառության խնդիր, և որ ստորադաս դատարանի կողմից թույլ են տրվել առերևույթ դատական սխալներ:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է վերացնել Առաջին ատյանի դատարանի 2016 թվականի փետրվարի 25-ի և Վերաքննիչ դատարանի 2016 թվականի մարտի 14-ի որոշումները, կայացնելով սկզբնական հայցի հիմքը և առարկան փոփոխելու հետևանքով լրացուցիչ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին նոր որոշում:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստաթղթերը**

Վճռաբեկ բողոքի պատասխանում պատասխանողները նշել են, որ բողոքաբերը վճռաբեկ բողոքում վկայակոչել է 2015 թվականի փետրվարի 25-ին ներկայացրած լրացուցիչ հայցադիմումը, մինչդեռ Ա.Հարությունյանը 2015 թվականի փետրվարի 25-ին դեռևս հայց չի ներկայացրել /հայցը դատարան է ներկայացվել 2015 թվականի դեկտեմբերի կեսերին/:

### **3. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը և բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից՝ այն հարցերի շուրջ, ինչպիսիք են վերաքննիչ դատարանի որոշումը պատճառաբանված լինելու անհրաժեշտությունը, հայցի հիմքը և առարկան փոխելու իրավաչափությունը և նման փոփոխությունը չթույլատրելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկման ենթակա լինելը կամ չլինելը:

Գերագույն դատարանը, վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելով Վերաքննիչ դատարանի որոշումը, գտնում է, որ վճռաբեկբողոքը պետք է մերժել և որոշումը՝ Գերագույն դատարանի պատճառաբանություններով, թողնել օրինական ուժի մեջ՝ ելնելով հետևյալից.

ԼՂՀ Սահմանադրության 44-րդ և 45-րդ հոդվածների 1-ին մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք, յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ԼՂՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասը ևս սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք: Իսկ նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել հավասարության պայմաններում և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքից:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու, դատական ակտերը բողոքարկելու իրավունքներ ունենալը դեռ չի նշանակում, որ ցանկացած անձ, ցանկացած պահանջով, ցանկացած ձևով կարող է դիմել դատարան, բողոքարկել դատարանի կայացրած ցանկացած որոշում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ դրա համար սահմանված են որոշակի նախապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն հայցադիմումը /դիմումը/, վերաքննիչ բողոքը համարվում են իրավաչափ և ընթացքավորվում:

Սույն վճռաբեկ բողոքում Գերագույն դատարանի առջև բարձրացված են հետևյալ իրավական հարցերը. 1/ արդյո՞ք բողոքարկման ենթակա չեն լրացուցիչ հայցային դիմումով ներկայացված հայցի հիմքը և առարկան փոխելը չթույլատրելու մասին առաջին ատյանի դատարանի դատական ակտերը, 2/ հայցի առարկայի և հիմքի միաժամանակ փոփոխության հնարավորությունը, 3/ վերաքննիչ դատարանը, վերադարձնելով վերաքննիչ բողոքը, արդյո՞ք պարտավոր չէ անդրադառնալ բողոքի բոլոր իրավական հարցադրումներին:

Բողոքն առաջին հիմքով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը գործին մասնակցող անձանց իրավունքների թվին է դասել դատական ակտերը բողոքարկելու իրավունքը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության չլուծող /միջանկյալ/ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով միայն նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում:

Նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատավարության տնտեսման, ողջամիտ ժամկետում գործի քննության, դատական քննության անհիմն ձգձգումներից խուսափելու նպատակներից ելնելով՝ օրենսդիրը նախատեսել է առաջին ատյանի դատարանի դատական որոշումների ինքնուրույն բողոքարկման միայն սահմանափակ դեպքեր:

Իսկ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վերաքննիչ դատարանը, նույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով...կայացնում է որոշում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին, որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված բոլոր առերևույթ խախտումները:

Այսպիսով, Գերագույն դատարանը հարկ է համարում փաստել, որ քաղաքացիական գործերով վերաքննության բողոքարկման իրավունքը բացարձակ չէ և արդարացված որոշակի հանգամանքներով՝ որոշ դատական ակտերով վերաքննության իրավունքը կարող է սահմանափակվել:

Քաղաքացիական դատավարության օրենսդրությունը հայցի հիմքը և առարկան լրացնելու հարցի քննարկման արդյունքով կայացրած առաջին ատյանի դատարանի որոշման վերաքննության կարգով բողոքարկման մասին որևէ նորմ չի նախատեսում: Ինչ վերաբերում է բողոքի այն փաստարկին, որ տվյալ դեպքում պետք է կիրառվեն հայցադիմումը վերադարձնելը /ընդունումը մերժելը/ կարգավորող նորմերը, ապա Գերագույն դատարանը փաստում է, որ դրանք տարբեր իրավական ինստիտուտներ են, և հայցի առարկայի կամ հիմքի փոփոխման դեպքում օրենսդիրը չի պահանջում, որպեսզի նման փոփոխությունը կատարվի լրացուցիչ հայցադիմում ներկայացնելու ձևով:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքում բարձրացված՝ հայցի հիմքը և առարկան միաժամանակ փոփոխելու արգելքի ոչ իրավաչափ լինելու և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի վկայակոչման հարցին՝ Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Հայցի հիմքը կամ առարկան փոխելը, հայցային պահանջների չափը փոփոխելը, հայցից հրաժարվելը, հայցը ընդունելը» վերտառությամբ 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե գործով քննությունն իրականացվում է դատաքննության նախապատրաստության փուլով, ապա հայցվորն իրավունք ունի փոխելու հայցի հիմքը և առարկան, ավելացնելու կամ նվազեցնելու հայցային պահանջների չափը մինչև առաջին

ատյանի դատարանում գործով դատաքննության սկսվելը: Հայցվորը հայցից կարող է հրաժարվել առաջին ատյանի դատարանում մինչև դատաքննության ավարտը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Հայցի հիմքը և առարկան լրացնելու իրավունքը» վերտառությամբ 143-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորի կողմից հայցի հիմքը կամ առարկան կարող է փոփոխվել մինչև դատաքննությունն նշանակելը: Դատարանը կարող է թույլ չտալ նման փոփոխությունը, եթե այն բերում է հայցի էության փոփոխության:

Ինչպես նկատելի է վերը նշված հոդվածների վերնագրերից և հոդվածների բովանդակությունից՝ օրենսդրի կողմից «կամ» և «և» շաղկապների մեխանիկաբար ոչ ճիշտ գործածելը կարող է տարաբնույթ մեկնաբանությունների պատճառ հանդիսանալ, քանի որ 27-րդ հոդվածի վերնագրում և 143-րդ հոդվածի դիսպոզիցիայում խոսքը գնում է հայցի հիմքի կամ առարկայի, իսկ 27-րդ հոդվածի դիսպոզիցիայում և 143-րդ հոդվածի վերնագրում՝ հայցի հիմքի և առարկայի մասին:

Գերագույն դատարանը գտնում է, որ նման դեպքերում պետք է ղեկավարվել «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի պահանջներով և մեկնաբանել նշված նորմերի հակասությունները, ելնելով օրենսդրի կամքի ճշգրիտ բացահայտումից ու նշված նորմերով կարգավորվող իրավադրույթների նպատակից:

Այսպես՝ «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունում... օրենքներում նորմերը ներկայացվում են հերթական համար ունեցող հոդվածների տեսքով: Հոդվածները կարող են ունենալ վերնագրեր: Հոդվածների վերնագրերը պետք է համապատասխանեն հոդվածների բովանդակությանը:

Նույն օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն իրավական ակտում միևնույն հասկացության կամ տերմինի բովանդակությունը տարբեր իմաստներով կրկնվելու դեպքում կիրառվում է հասկացության կամ տերմինի այն բովանդակությունը, որը բխում է տվյալ իրավական ակտի էությունից կամ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի սկզբունքներից:

Վերլուծելով վերը նշված իրավական նորմերը, Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Տնօրինչական սկզբունքին համապատասխան կողմերը քաղաքացիական դատավարությունում օժտված են մի շարք այսպես կոչված տնօրինչական իրավասություններով, որոնք թույլ են տալիս նրանց ազդել դատական քննության առարկայի վրա, այդ թվում՝ փոփոխել այն:

Մինչև գործը դատաքննության նշանակելը հայցվորն իրավունք ունի փոփոխել ներկայացված հայցի առարկան կամ հիմքը, ինչպես նաև ավելացնել կամ նվազեցնել հայցային պահանջների չափը: Փոփոխելով հայցը, հայցվորը կամ լրացնում է պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը նոր պահանջով, կամ ներկայացնում է իր բնույթով այլ պահանջ: Հայցվորն իրավասու է նաև փոփոխել և հայցի փաստական ու իրավական հիմքը: Սակայն չի թույլատրվում միաժամանակ փոփոխել և հայցի առարկան և հայցի հիմքը, քանի որ ըստ էության դա կնշանակի նոր հայցի ներկայացում: Տվյալ դեպքում դատարանը պետք է հայցվորին բացատրի ընդհանուր կանոններով նոր հայցի ներկայացման նրա իրավունքը: Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ և 143-րդ հոդվածները մեկնաբանելիս, պետք է նկատի ունենալ, որ խոսքը գնում է հայցի հիմքի կամ առարկայի, այսինքն՝ դրանցից որևէ մեկի, այլ ոչ թե միաժամանակ երկուսի փոփոխման մասին: Հետևաբար, հայցը ավելացնելու, հայցի

հիմքը և առարկան փոխելու արգելքը մեկ քաղաքացիական գործի շրջանակներում չի գրկում հայցվորին առանձին ձևով մեկ այլ հայց ներկայացնելուց, որի ընդունումը մերժելը կամ վերադարձնելը ենթակա է բողոքարկման:

Գերագույն դատարանը գտնում է, որ օրենսդրի նման մոտեցումը պայմանավորված է նաև նրանով, որ բացառվեն իրավունքի չարաշահումը, գործի քննության անհարկի ձգձգումները, որպեսզի ապահովվի գործի քննությունը ողջամիտ ժամկետում: Դատարանն ինքն է որոշում, օրենքի պահանջներից ելնելով, իր գործունեության սահմանները, ինչը բխում է նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում դատարանն իրավունք ունի, ի թիվս այլ գործողությունների, քննարկել գործի քննությանը այլ անձանց ներգրավելու, ոչ պատշաճ կողմին փոխարինելու, մի քանի պահանջների միացման և առանձնացման հարցերը: Նման իրավասություն իրականացնելիս դատարանը պետք է ելնի գործի արդյունավետ քննության, խնայողականության, գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքներից: Հետևաբար բողոքի նշված հիմքը ևս անհիմն է:

Անդրադառնալով վճռաբեկ բողոքի՝ Վերաքննիչ դատարանի որոշման ոչ պատճառաբանված լինելու մասին փաստարկին՝ Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերաքննիչ բողոք ներկայացնելիս յուրաքանչյուր բողոքաբեր ակնկալում է, որ կստանա իր առաջադրած իրավական հարցերի պատասխանները:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230.1-ին հոդվածը սահմանում է, որ առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանը կայացնում է որոշում, որը պետք է բավարարի նույն օրենսգրքի 121.1-ին հոդվածով սահմանված պահանջները: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է լինի օրինական, հիմնավորված և պատճառաբանված: Իսկ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121.1-ին հոդվածի համաձայն՝ <<1. Առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական է, եթե այն կայացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենսգրքի, այլ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ, որոնց նորմերը կիրառելի են տվյալ գործը քննելիս: 2. Առաջին ատյանի դատարանի վճիռը հիմնավորված է, եթե վճռում շարադրված եզրահանգումները և հաստատված փաստերը համապատասխանում են առաջին ատյանի դատարանում հետազոտված ապացույցներին: 3. Առաջին ատյանի դատարանի վճիռը պատճառաբանված է, եթե դրանում երևում են փաստերի հաստատման, ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքը և դրանից բխող եզրահանգումները>>:

Նշված իրավակարգավորումը դիտարկելով արդար դատաքննության իրավունքի համատեքստում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ դատարանի վրա դատական ակտերը հիմնավորելու պահանջ դնելը նպատակ է հետապնդում նպաստել հասարակության կողմից դատական համակարգի և դատարանի նկատմամբ վստահության մեծացմանը և կոչված է ապահովել դատական պաշտպանության իրավունքի իրականացումը՝ դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը: Ուստի կարելի է նշել, որ դատական ակտի հիմնավորումը անհրաժեշտ է դատական ակտի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրականացման համար, և դատարանները պետք է խստիվ պահպանեն դատական ակտերի պատճառաբանվածությանը ներկայացվող պահանջները: Նշված հիմքով բողոքի փաստարկը հիմնավոր է:

Ինչ վերաբերում է բողոքի այն փաստարկին, որ օրենսդիրը չի պարտավորեցնում հայցի հիմքը և առարկան փոխել չթույլատրելու մասին առանձին դատական ակտ կայացնելը, ապա Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ քաղաքացիական գործի վարույթի ընթացքում ծագող բոլոր դատավարական /ընթացակարգային/ հարցերը՝ գործը հարուցելու պահից մինչև վարույթի ավարտը լուծվում են որոշումներ կայացնելու միջոցով, լինի դա առանձին ակտի ձևով կամ առանց առանձին ակտի ձևով այն ձևակերպելու /արձանագրային որոշումներ/, ինչը բխում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի պահանջներից, համաձայն որոնց՝ դատարանը քաղաքացիական գործերով կայացնում է վճիռներ, որոշումներ և արձակում վճարման կարգադրություններ /այսուհետ՝ դատական ակտեր/:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն, որ Վերաքննիչ դատարանը ճիշտ է հանգել Առաջին ատյանի դատարանի որոշման վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու մասին եզրակացությանը, Գերագույն դատարանը գտնում է, որ պետք է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված Գերագույն դատարանի լիազորությունը և վճռաբեկ բողոքը մերժել՝ Վերաքննիչ դատարանի բողոքարկված որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1 Հայցվոր Արմեն Հարությունյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի՝ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 2016 թվականի մարտի 14-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ  
Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**